## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2017 թվականի N 13

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Ալոյան Ալիկ | | | |
| 5. Միքայելյան Սլավիկ | | | |
| 6. Պողոսյան Զավեն | | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու « 14 » օգոստոսի 2017թ.
N 13 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Լ. Գրիգորյան -Համայնքի ղեկավարի տեղակալ/

2.Ծաղկալանջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 33 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/ Լ. Գրիգորյան -Համայնքի ղեկավարի տեղակալ /

3. Ծաղկալանջ համայնքի *խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու , հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2006 թվականի նոյեմբերի 10 – ի N 03 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին* :

/ Լ. Գրիգորյան -Համայնքի ղեկավարի տեղակալ /

4. Ծաղկալանջ համայնքի իրավաբանական անձանց աղբահանության վճարների դրույքաչափերի վերաբերյալ:

/ Լ. Գրիգորյան -Համայնքի ղեկավարի տեղակալ /

**Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 օգոստոսի 2017թվականի N 14 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին

*որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19 -ի «2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
2. Բյուջեի եկամտային մասի 1352 տողում որպես համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճար ավելացնել 333.6 հազ.դրամ և տալ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 հատվածի 5122 հոդվածին և 01.6.1հատվածի 4819 հոդվածի 200.0հազ. դրամից պակասեցնել 161.4հազ.դրամով և տալ նույն հատվածի 5122 հոդվածին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Միքայելյան Սլավիկ | | | |
| 5. Ալոյան Ալիկ | | | |
| 6.Պողոսյան Զավեն | | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

*<< 14 >> օգոստոսի 2017թ.* *N 15*

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10 - Ի N 03 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի երկրորդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ 2017 թվականի մարտի 31-ի N01.1/12/1275-17 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***ավագանին որոշեց՝***

1. Ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ սահմանել Հրայր Եգորյանին:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2006 թվականի << 10 նոյեմբերի >> N 03 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

***1. Երվանդյան Երվանդ*** ------------------ ------------------ ------------------
***2.Դավթյան Գևորգ*** ------------------ ------------------ ------------------
***3.Պողոսյան Մխիթար*** ------------------ ------------------ ------------------
***4.Ալոյան Ալիկ*** ------------------ ------------------ ------------------
***5.Միքայելյան Սլավիկ*** ------------------ ------------------ ------------------
***6.Պողոսյան Ջավեն*** ------------------ ------------------ ------------------

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝*** ***Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ***

*2017 թվականի օգոստոսի 14,*
*Ծաղկալանջ համայնք*

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու «14» օգոստոսի 2017 թ.
N-15 որոշման

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Եգորյան -Ծաղկալանջի միջն.դպրոց ՊՈԱԿ-ի տնօրեն

Քարտուղար՝ Ս.Սենիքերիմյան – Ծաղկալանջի համայնքապետարանի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Աստղիկ Մկրտչյան – բուժքույր

Սլավիկ Միքայելյան – ավագանի

Երվանդ Երվանդյան – ավագանի

Անի Միքաելյան - մանկավարժ- հոգեբան

**Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14օգոստոսի 2017 թվականի N16

## ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մաս 18-րդ կետով, « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին

*որոշում է՝*

1. Հաստատել Ծաղկալանջ համայնքի առևտրի ,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների աղբահանության վճարների դրույքաչափերը 1քմ 25 դրամով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Դավթյան Գևորգ | | | |
| 2. Միքայելյան Սլավիկ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Երվանդյան Երվանդ | | | |
| 5.Ալոյան Ալիկ | | | |
| 6.Պողոսյան Զավեն | | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ / Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ /

2017 թվականի
օգոստոսի 14
Գ. Ծաղկալանջ